



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ Պրոբլեմային ուսուցման
մեթոդաբանությունը և կիրառումը աշխարհագրության դասավանդման
պրոցեսում*

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Բաբախանյան Հայարիի

*Ուսումնական հաստատություն՝ Չարենցավանի Ս. Ավանյանի
անվան 4 հիմն . դպրոց*

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----	3
Պրոբլեմային ուսուցում-----	5
Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը աշխարհագրության դասավանդման պրոցեսում-----	10
Եզրակացություն-----	15
Օգտագործված գրականություն-----	17

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական գործընթացի զարգացման, կատարելագործման ուղիների որոնումը հանգեցնում է մանկավարժական տարբեր տեխնոլոգիաների մշակման, որոնց շարքում է նաև պրոբլեմային ուսուցումը, այսինքն՝ ուսուցման գործընթացի այնպիսի կազմակերպումը, որը սովորողին ստեղծված իրավիճակը գիտակցելու, առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու, չիմացածն ու անհայտը որոնելու, խնդիրը լուծելու և վերջնական նպատակին հասնելու հնարավորություն է ընձեռում: Նշված տեխնոլոգիայի էությունը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է, որը նպաստում է սովորողների մտածողության մակարդակի բարձրացմանը:

Մերօրյա տեղեկատվական դարաշրջանում սովորողները ամրապնդման ենթակա նյութի ծավալների աճին գուցահեռ հաճախ ոչ թե ամրապնդում, այլ պարզապես մտապահում են յուրացման համար նախատեսված նյութերը, այն էլ՝ շատ կարճ ժամանակով և միայն դասահարցմանը պատրաստ լինելու համար: Դպրոցական դասընթացում թեմային հատկացված ժամանակահատվածի սահմանափակությունը, աշակերտների թիվը հնարավորություն չեն տալիս ուսուցչին պարզելու՝ արդյո՞ք թեման յուրացվել է յուրաքանչյուր սովորողի կողմից, հարցման ենթարկված աշակերտը իրականում ամրապնդե՞լ է թեման, թե՞ պարզապես կարողանում է վերարտադրել մտապահածը: Բացի դրանից՝ դասարանային պայմաններում նույն թեման միևնույն ժամանակահատվածում և միևնույն մեթոդներով, ընդհանուր կամ միևնույն ուսումնական ծրագրերով դասարանների յուրաքանչյուր սովորողի կողմից չի կարող յուրացվել նույն աստիճանով, քանի որ տարբեր աշակերտներ ունեն տարբեր ընդունակություններ: Ուստի հաջորդ նյութին անցնելուց առաջ ուսուցիչները բավարարվում են սովորողների կողմից տվյալ թեմայի յուրացման աստիճանի գնահատմամբ: Նմանօրինակ խնդիրների լուծման արդյունավետ ուղիներ են առաջարկում ուսուցման նորարարական բազմաթիվ տեխնոլոգիաներ, որոնցից մեկն էլ պրոբլեմային ուսուցումն է:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան մշակել է Ջ. Դյուին: «Ինչպե՞ս ենք մենք մտածում» աշխատության մեջ (1909) ամերիկացի փիլիսոփա, հոգեբան ուսուցիչը մերժում է ավանդական դոգմատիկ ուսմունքը՝ դրան հակադրելով խնդիրների լուծման գործում ուսանողների ակտիվ և անկախ պրակտիկ գործունեությունը: «Մտածմունքն սկսվում է այնտեղ, որտեղ առկա է խնդրահարույց իրավիճակ, և դա խնդիրների լուծումն է», – ասում է Դյուին: Նրա այս բանաձևը XX

դարում ձևավորեց պրոբլեմային ուսուցման հիմքը [6, էջ 68]:

Պրոբլեմային ուսուցման տեսության զարգացման մեջ էական դեր է խաղացել ամերիկացի հոգեբան Ջ. Բրուների հայեցակարգը, որը հիմնված է ուսուցման նյութի կառուցվածքի և նոր գիտելիքների յուրացման գործընթացում ինտուիտիվ մտածողության գերիշխող դերի վրա: Ճանաչելով տրամաբանական մտածողության զարգացումը որպես ուսուցման նպատակ՝ Ջ. Դյուին, Ջ. Բրուները, Վ. Բարթոնը նշում են ուսուցման մեջ խնդրահարույց մոտեցման կարևորությունը:

Ինչպես ուսուցման մյուս տեխնոլոգիաները, պրոբլեմային ուսուցումը ևս նպատակաուղղված է կրթության որակի բարձրացման խնդրի լուծմանը, որն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսուցման գործընթացի կազմակերպման նորարարական միջոցների օգնությամբ:

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Մտածողության պրոցեսի սկիզբը պրոբլեմային իրավիճակն է:

Մարդն սկսում է մտածել այն ժամանակ, երբ ինչ որ բան հասկանալու կարիք ունի: Մտածողությունը որպես կանոն առաջանում է հարցից կամ պրոբլեմից, զարմանքից կամ հակասությունից: Մտածողության պրոցեսը միշտ ուղղված է

ինչ որ խնդրի լուծմանը:

Ս. Լ. Ռուբինշտեյն

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ:

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի:

Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ

«գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է:

Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել:

Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Դպրոցի զարգացման ժամանակակից փուլում, երբ առկա է բնագիտական առարկաների ժամաքանակների կրճատման միտումը, ծագում է ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայի արդիականացման հարց: Չի կարելի և հնարավոր չէ աշակերտին սովորեցնել այն ամենը, ինչ անհրաժեշտ է կյանքում, սակայն պետք է սովորեցնել ինքնուրույն ստանալ գիտելիքներ, կարողանալ դրանք օգտագործել կյանքում, պլանավորել զարգացման ուղին, հասկանալ երևույթների էությունը:

Պրոբլեմային է կոչվում այն ուսուցումը, որի ընթացքում աշակերտները, ուսուցչի ղեկավարությամբ, իրենց ունեցած գիտելիքների հիման վրա լուծում են պրոբլեմային խնդիրներ, հաղթահարում պրոբլեմային իրավիճակներ, որոնում գործողության նոր եղանակներ, կարգավորում ու կողմնորոշում իրենց գործունեությունը, գործադրում պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական կամ հետազոտական մեթոդներ, ինքնուրույնաբար ձևակերպում իրենց եզրակացությունները:

Պրոբլեմային ուսուցման **գլխավոր նպատակը** սովորողների տրամաբանական մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացումն է, որը կարելի է իրականացնել պրոբլեմային խնդիրներ լուծելու, պրոբլեմային իրավիճակներ հաղթահարելու միջոցով: Ուստի իզուր չեն հոգեբաններն ասում՝ պրոբլեմի լուծման օրինաչափությունները նաև մտածողության զարգացման օրինաչափություններ են և հակառակը: Պրոբլեմային ուսուցման *էությունը* պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է, որն արթնացնում ու ակտիվացնում է սովորողների մտածական գործունեությունը: Այն ընձեռում է ստեղծված իրավիճակը գիտակցելու, առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու, անհայտը որոնելու, ունեցած գիտելիքները փորձարկելու, վարկածներ առաջադրելու, գործողության նոր եղանակներ հայտնաբերելու, պրոբլեմը լուծելու, վերջնական նպատակին հասնելու հնարավորություն:

Ուսուցման այս ձևն ունի մի շարք առավելություններ.

- ա) զարգացնում է սովորողների տրամաբանական մտածողությունը,
- բ) ուսումնական նյութը դարձնում է ապացուցելի և այլևս ոչ մի կասկած չի հարուցում,
- գ) ուսուցման գործընթացը դարձնում է հուզականորեն հազեցած,
- դ) ընձեռում է միջառարկայական կապերից օգտվելու հնարավորություն,
- ե) ձեռք բերված գիտելիքները երկար ժամանակ մտապահվում են,
- զ) ինտենսիվ ացնում է ուսուցումը և արագացնում նրա տեմպը, ինչպես նաև մեծացնում է աշակերտների ինքնագործունեության շրջանակը, լայնացնում նրանց որոնողական, հետազոտական աշխատանքներ կատարելու ոլորտը, ծանոթացնում գիտական մեթոդներին:

Պրոբլեմային ուսուցման հիմնական հասկացություններից են ուսումնական պրոբլեմը (կամ՝ պրոբլեմային խնդիրը), պրոբլեմային հարցը և պրոբլեմային իրավիճակը:

Պրոբլեմային խնդիրը որոնելի անհայտից բխող ենթապրոբլեմների ու պրոբլեմային հարցերի համակցությունն է, դրանց ամբողջականությունը կամ համակցությունը, որն առաջացնում է պրոբլեմային իրավիճակ:

Ուսումնական պրոբլեմն ունի որոնելի անհայտի բացահայտման ֆունկցիա: Նպաստում է գործողությունների նոր եղանակներ, նոր գիտելիքներ հայտնագործելուն, հանդես է գալիս տրամաբանական, հոգեբանական հակասությունների ձևով: Պրոբլեմային խնդրի էությունը նրանում եղած անհայտն է, որի հայտնադործումը կապված է աշակերտի տրամաբանության, մտավոր գործառնություններ կատարելու, ճանաչողական գործունեություն ծավալելու հետ: Սովորական խնդիրը և պրոբլեմային խնդիրը տարբեր հասկացություններ են: Պրոբլեմային խնդիրը ներառում է ենթապրոբլեմներ, պրոբլեմային հարցեր, առաջացնում շղթայական իրավիճակներ: Մինչդեռ սովորական խնդիրը գուրկ է այդպիսի հատկություններից:

Պրոբլեմային խնդրում որոնելին այն անհայտն է, որի հայտնագործումից է կախված խնդրի լուծումը, ստեղծված պրոբլեմային իրավիճակի հաղթահարումը: Աշակերտի ստեղծագործական, տրամաբանական մտածողությունը զարգացնում է ոչ թե սովորական, այլ պրոբլեմային խնդիրը:

Պրոբլեմային հարց կոչվում է այն հարցը, որն առաջացնում է իմացական

դժվարություն: Եթե հարցի պատասխանը չի պարունակում նոր գիտելիքներ կամ որոնելի անհայտ, ապա այդպիսի հարցը պրոբլեմային չէ: Օրինակ՝ «Ի՞նչ է աշխարհագրական թաղանթը», «Ի՞նչ է բնական զոնան»: Մրանք սովորական հարցեր են, բայց ոչ պրոբլեմային, մինչդեռ պրոբլեմային հարցը ստիպում է աշակերտին գիտակցել և ընդունել նրանից առաջացած պրոբլեմային իրավիճակը, որոնել գործողության նոր եղանակներ, հայտնաբերել նոր գիտելիքներ՝ հարցում եղած անհայտը որոնելու համար: Ուրեմն պրոբլեմային է այն հարցը, որի պատասխանը աշակերտի գիտելիքներում չկա և ոչ էլ առկա է ինֆորմացիայում: Նշանակում է՝ պրոբլեմային հարցը առաջացնում է դժվար կացություն, պրոբլեմային իրավիճակ: Օրինակ՝ «Ինչո՞ւ է ըստ բարձրության ջերմաստիճանը նվազում», «Ինչու է լեռնային տարածքներում բնական զոնաները փոփոխվում ըստ վերընթաց գոտիականություն»:

Պրոբլեմային իրավիճակը պրոբլեմային ուսուցման կենտրոնական օղակն է: Այն աշակերտների համար ստեղծված մտավոր լարվածության պահն է, որը լի է հակասություններով:

Այդպիսի պահ է առաջանում այն ժամանակ, երբ տեսական կամ գործնական խնդիր լուծելիս աշակերտի ունեցած գիտելիքները չեն բավարարում, նա ընկնում է անելանելի վիճակի մեջ: Այդպիսի վիճակը ընդունված է անվանել պրոբլեմային:

Հոգեբան Ա. Մ. Մատյուշկինը պրոբլեմային իրավիճակի հոգեբանական կառուցվածքում առանձնացնում է երեք բաղադրամաս.

1. իմացության պահանջմունք, որն արթնացնում է մարդու մտավոր ակտիվությունը:
2. Անհայտ գիտելիքներին կամ գործողության եղանակներին տիրապետելու ձգտումը:
3. Մարդու մտավոր գործունեությունը, որը ներառում է նրա ստեղծագործական ընդունակություններն ու անցյալի փորձը:

Երբ աշակերտին առաջադրվում է պրոբլեմային խնդիր, նա առաջին հերթին մտածում է գտնել գործողության նոր եղանակներ, համախմբում է իր ունեցած գիտելիքները, կարողությունները, դատում է, տրամաբանում, առաջադրում վարկածներ և այլն: Այս ամենը նրան հարկադրում է ստեղծված պրոբլեմային իրավիճակը: Ուստի իզուր չէր Ս. Լ. Ուոլֆինշտեյնն ասում, որ մտածողության սկիզբը պրոբլեմային իրավիճակի ծագումն է:

Պրոբլեմային ուսուցումն ունի **զարգացնող և դաստիարակչական գործառույթներ**: Որպես զարգացնող գործառույթ կարելի է նշել մտածողության որոշակի մոդելներ և հետազոտական գործունեության ավգորիթմներ ձևավորելու նրա ընդունակությունը, ինչը բարձրացնում է մտածողական գործընթացի արդյունավետությունը: Բացի այդ, այն ուսուցման կազմակերպման տրամաբանությունը մոտեցնում է գիտական հետազոտությունների կատարման տրամաբանությանը և դրանով իսկ զարկ տալիս սովորողների որոնողական-հետազոտական գործունեության ոլորտի ընդարձակմանը:

Պրոբլեմային ուսուցումը նպաստում է սովորողների իմացական հետաքրքրությունների ձևավորմանն ու որոշակիացմանը:

Պրոբլեմային ուսուցումը կարելի է իրականացնել **դեդուկտիվ և ինդուկտիվ** մեթոդների կիրառմամբ: Առաջին դեպքում սովորողները հնարավորություն են ստանում իմացած գիտելիքներից տեսական –տրամաբանական ճանապարհով արտածել նոր գիտելիքներ: Ինդուկտիվ մեթոդի կիրառման պարագայում առավել ընդլայնվում է որոնողական գործունեության ոլորտը, ձևավորվում են ստեղծագործական մտածողության տարրեր:

Պրոբլեմային ուսուցումը սովորողների մտավոր դաստիարակության լուրջ գործառույթ ունի: Սովորողները կուտակում են ստեղծագործական գործունեության փորձ, սովորում են ունեցած գիտելիքները ստեղծագործաբար կիրառել երևույթները հասկանալու-բացատրելու համար: Բացի այդ, ձևավորվում են գիտելիքները միմյանց հաղորդելու կարողություններ, քննադատական մտածողություն, բանավիճելու կուլտուրա: Քայլ առ քայլ երեխաները ձեռք են բերում բնության մասին որոշակի ընդհանրական պատկերացումներ, ինչը գիտական աշխարհայացքի ձևավորման հիմքն է:

Պրոբլեմային իրավիճակն առաջանում է ուսումնական նյութի տրամաբանությունից: Ուսումնական բոլոր նյութերը չէ, որ կարող են ծառայել պրոբլեմային ուսուցմանը: Քանի որ պրոբլեմային խնդիրը ներառում է ենթապրոբլեմներ, պրոբլեմային հարցեր և առաջացնում շղթայական իրավիճակներ, ապա փորձենք մեկ օրինակով ցույց տալ, որ դա, իրոք, այդպես է:

Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը աշխարհագրության դասավանդման պրոցեսում

Ներկայումս դպրոցական աշխարհագրությունը հիմնականում կողմնորոշված է աշակերտներին աշխարհագրական համակարգված գիտելիքներ, հմտություններ և կարողություններ տալու, որը նպաստում է նրանց բազմակողմանի զարգացմանը: Դրա համար էլ ուսուցումը ձեռք է բերել վերարտադրողական գործընթաց, այսինքն՝ աշակերտները, սովորելու ընթացքում ուսուցչից ստանալով պատրաստի գիտելիքների որոշակի պաշար, պարտավոր են այն յուրացնել մտապահել և ցանկացած ժամանակ կամ իրավիճակում վերարտադրել գրավոր կամ բանավոր ձևով:

Նոր գիտելիքների հաղորդման և նրա ամրապնդման ընթացքում ուսուցիչը աշակերտներին առաջարկում է խնդիրներ, որոնց լուծման միջոցով փորձում է ամրապնդել հաղորդած գիտելիքները, միևնույն ժամանակ ցանկանում է զարգացնել աշակերտների կարողությունները և հմտությունները, ստացած նոր գիտելիքները մտածված կիրառել գործնական աշխատանքում: Բայց զարգացող և կատարելագործվող ուսուցման գործընթացի համար դա դեռևս բավարար չէ: Ժամանակակից ուսուցման գործընթացը պահանջում է, որ աշակերտները գիտելիքներ, կարողություններ, հմտություններ ձեռք բերեն ոչ միայն սովորելու ժամանակ, այլև ինքնուրույնաբար, այսինքն՝ իրենց մեջ մշակեն այնպիսի ունակություններ, կարողություններ, կամային որոկներ, որոնք հնարավորություն կտան գիտելիքներ ձեռք բերել նաև ինքնուրույն, ստեղծագործական աշխատանքի միջոցով: Կարողանան ոչ միայն հասկանալ ուսուցչի կողմից առաջադրված խնդիրը և ինքնուրույն հասնեն դրանց լուծմանը: Այս գործընթացը պետք է լինի դպրոցական աշխարհագրություն դասավանդող ուսուցչի գերխնդիրը, քանի որ դա էլ հենց հանդիսանալու է ուսուցմանը պրոբլեմային մոտեցում ցուցաբերելը:

Այսօր ուսուցման գործընթացը զարգացնելու հնարավորությունները բավականին մեծ են : Կան ուսուցման նյութատեխնիկական բազա, գիտության զարգացման բարձր մակարդակ , որակյալ մասնագիտական կադրեր: Նշված հնարավորությունները պետք է օգտագործել աշակերտների ճանաչողական հետաքրքրությունները զարգացնելու համար: Ամեն ինչ անել , որ աշակերտը աշխարհագրական օբյեկտը, երևույթը , հասկացությունը ճանաչի իր բոլոր դրսևորումներով , որքան խորն է ճանաչում աշխարհագրական օբյեկտը կամ երևույթը թե արտաքին , թե ներքին հատկանիշներով ու հատկություններով , այնքան խորն են նրա գիտելիքները այդ և երևույթների մասին: Դրան հասկանալու համար անհրաժեշտ է , որ աշակերտների մոտ ձևավորվել ճանաչողական հետաքրքրություններ, արդյունավետ մտածողություն , որպեսզի հետագայում նա կարողանա ինքնուրույն ստեղծագործական աշխատանքով զբաղվել, վերջինիս հասնելու համար ուսուցմանը պետք է ցուցաբերել պրոբլեմային մոտեցում:

Ինչպես արդեն նշել ենք, պրոբլեմային ուսուցման ժամանակ աշակերտների առջև դրվում է որոշակի պրոբլեմ , որը նրանք պետք է լուծեն ինքնուրույն: Այս պրոբլեմը կարող է լինել ճանաչողական , գործնական , հետազոտական: Այսպիսի պրոբլեմների լուծումը պայմանավորել միայն աշակերտների ունեցած գիտելիքներով և կարողություններով ` ճիշտ չի լինի , անհրաժեշտ է համատեղ ուժերով փնտրել ուղիներ, ձևեր, միջոցներ , ունեցած գիտելիքները և կարողությունները տեղափոխել նոր իրավիճակային պայմաններ և գտնել պրոբլեմի լուծման ճշգրիտ ուղին:

Աշակերտների ունեցած գիտելիքների և առաջադրվող պրոբլեմի պահանջի միջև պահանջի միջև եղած հակասությունը լուծելու հիմնական ուղին աշակերտների ինքնուրույն մոտեցումն է: Ուսուցման գործընթացում ստեղծվում է , այսպես կոչված , պրոբլեմային իրավիճակ, որը ստեղծում է ուսուցիչը և աշակերտներից պահանջում է ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի շնորհիվ մտածողությունը զարգացնելով ` գտնել առաջադրված պրոբլեմի ճիշտ լուծումը: Պրոբլեմային իրավիճակի ստեղծումը ուսուցման գործընթացի առաջին օղակն է: Հաջորդ օղակը պրոբլեմի ձևակերպումն է , աշակերտների կողմից նրա ընկալումը , լուծման ուղիների փնտրումը և վերջապես պրոբլեմի լուծումը:

Դպրոցական աշխարհագրության դասերին պրոբլեմային իրավիճակի ստեղծողը ուսուցիչն է : Նրա մտածված գործողություններով է պայմանավորված , թե

աշակերտները որքանով կկարողանան ձևակերպել պրոբլեմը ,ինչպես կընկալեն և ինչպիսի լուծումներ կառաջարկեն:

Աշխարհագրության ուսուցման գործընթացում կարելի է առաջադրել պրոբլեմային իրավիճակների ստեղծման երեք տիպեր.

1. Երբ աշակերտները ի վիճակի չեն լուծել առաջադրված խնդիրը անբավարար գիտելիքների պատճառով, կամ առաջադրված խնդրում կա տեղեկությունների կամ առաջադրված խնդրում կա տեղեկությունների կամ տվյալների պակաս:

Օրինակ՝ ինչու Հայաստանի Հանրապետությունում նույն լայնությունների վրա տարբեր են բնական զոնաները և ինչպիսի դասավորություն ունեն: Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրության դասընթացից աշակերտները արդեն սովորել են , որ բնական զոնաները երկրագնդի վրա տեղաբաշխված են լայնակի ուղղությամբ՝ հասարակածից դեպի բևեռները, համապատասխան կլիմայական գոտիների սահմաններում: Եթե ուշադրությամբ դիտում ենք Եվրասիա մայրցամաքի բնական զոնաների թեմատիկ քարտեզը, ապա տեսնում ենք, որ Հայաստանի Հանրապետության տարածքը գտնվում է մերձարևադարձային գոտու կիսանապատային և անապատային բնական զոնաների սահմանում, սակայն նրա տարածքում նույն լայնությունների վրա տարբեր մասեր ունեն տարբեր բնական համալիրներ: Ստացվում է, որ արդեն կա հակասություն աշակերտների ունեցած գիտելիքների և նոր հարցադրման մեջ պահանջվող փաստերի:

Որպեսզի էլ ավելի սրի հակասությունը, ուսուցիչը սկսում է հիշեցնել անցած թեմաների այն բաժինները , որոնք կարող են օգտակար լինել պրոբլեմի լուծման համար, դիտավորյալ չի հիշեցնում կլիմայական գոտիները, դրանով իսկ աշակերտներին չի տալիս լրիվ տեղեկություններ բնական զոնաների ձևավորման մասին՝ ստիպելով ,որ աշակերտները տրամաբանորեն հանգեն ճիշտ եզրակացության: Այսպիսով՝ պրոբլեմային իրավիճակը ստեղծված է : Աշակերտները քայլ առ քայլ վերհիշելով լեռնային երկրներում կլիմայական պայմանների փոփոխության օրինաչափությունները, հանգում են այն եզրակացության , որ Հայաստանի Հանրապետության բնական զոնաները չեն համապատասխանում աշխարհագրական տվյալ լայնության բնական զոնաներին, որովհետև այն ունի լեռնային մակերևույթ , լեռնային երկիր է, իսկ լեռնային երկրներում բնական զոնաները փոփոխվում են ըստ վերընթաց գոտիների՝ համապատասխան կլիմայական ուղղաձիգ գոտիների:

2. Պրոբլեմը լուծելու համար աշակերտներն արդեն ունեն բավարար գիտելիքներ բնության տարրերի փոխադարձ կապերի, բնական զոնաների նբաշխվածության մասին՝ կապված կլիմայական գոտիների հետ: Աշակերտներին մնում է ,որ ընտրեն այն էլեմենտների գուգակցումը, որոնք կարող են լուծել առաջադրված պրոբլեմը: Այդ կապերը կարելի է փնտրել կլիմայի , ռելիեֆի և բնական զոնաների քարտեգների միջոցով:

Պրոբլեմային իրավիճակի ստեղծումը ակտիվացնում է աշակերտներին , ստիպում է նրանց ինքնուրույն փնտրել և գտնել դրված առաջադրանքի ,պրոբլեմի պատասխանը: Այսպիսի պրոբլեմային իրավիճակ կարելի է ստեղծել բոլոր դասարաններում,բոլոր թեմաներից:

3.Պրոբլեմային իրավիճակ կարելի է ստեղծել նաև այն դեպքում ,երբ սովորողները իրենց սովորած գիտելիքները պետք է կիրառեն նոր իրավիճակային պայմաններում : Ասենք, թե աշակերտները սովորել են կլիմայական պայմանների փոփոխությունները լեռնային շրջաններում, որը հանգեցնում է բարձրության գոտիականությանը: Այս երևույթը նրանք սովորել են Ալպերի կամ Կովկասի օրինակով: Բայց այժմ նրանց առջև խնդիր է դրված որոշել բարձրության գոտիականությունը այլ լեռներում , ասենք Ապենիններում: Քարտեզից պարզ երևում է, որ Ապենինները գտնվում են մերձարևադարձային կլիմայական գոտում: Այս լեռներում բացակայում են անտառները և հավերժական ձյան ծածկույթը , որոնք կային Ալպերում: Աշակերտների համար ստեղծվել է պրոբլեմային իրավիճակ: Նրանք պետք է Ապենինների բարձրության գոտիների առաջացման բացատրությունը փնտրեն բնական այլ տարրերի գուգակցման միջոցով,քան Ալպերինն է:

Աշակերտներին առաջադրված պրոբլեմային իրավիճակը կարող է նրանց առջև դնել այնպիսի խնդիր, որը աշակերտները կարող են լուծել հետազոտման միջոցով:

Այսպիսի պրոբլեմային իրավիճակներ ստեղծվում են տեղանքում կողնորոշվելու, հորիզոնի կողմերը որոշելու թեմաներից:

Պրոբլեմը ստեղծում է ուսուցիչը, որոշում է պրոբլեմի լուծման քայլերի հաջորդականությունը և հանձնարարում աշակերտներին մտածել ու կատարել աշխատանքը: Խնդրի լուծման առանձին էտապներ աշակերտները կատարում են ինքնուրույն , իսկ որոշ տեղերում հուշում է ուսուցիչը: Վերջ ի վերջո , համատեղ ջանքերով լուծում են պրոբլեմը: Օրինակ, եթե ուսուցիչը ինչ-որ տեղ՝ դպրոցից որոշակի հեռավորության վրա թաքցրել է որևէ իր, աշակերտներին տալիս է

հեռավորությունը և ազիմուտը , ապա աշակերտները կողմնացույցի միջոցով հայտնաբերում են նոր թաքցրած իրը: Ուսուցման այսպիսի մոտեցումը զարգացնում է աշակերտների ոչ միայն մտածողությունը, այլև նոր գիտելիքների ձեռքբերման հնարավորությունները:

Աշակերտների կողմից գիտելիքների վերարտադրելը ,ստեղծագործական մոտեցումը, առարկայական և ոչ առարկայական մտածողությունը գիտելիքների յուրացման բոլոր էտապներում գտնվում են սերտ փոխկապակցության մեջ: Դրա համար էլ դպրոցական աշխարհագրության դասավանդման գործընթացում ավանդական և պրոբլեմային մոտեցումների զուգակցման անհրաժեշտություն է զգացվում:

Եզրակացություն

Ուսուցման ժամանակակից մեթոդները նոր պահանջներ են առաջադրում աշխարհագրության ուսուցման գործընթացում: Պրոբլեմային ուսուցման միջոցով հնարավոր է ոչ միայն արդյունավետորեն իրականացնել տեսական նյութի ուսուցումը, այլև սովորողի մոտ ստեղծել ինքնազարգացման հմտություններ: Այդ ամբողջ գործընթացը հիմնված է առաջնային՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման և երկրորդային՝ երկարաժամկետ անհատական կարողությունների զարգացման արդյունքների գիտակցված ընտրության վրա: Հետևաբար պրոբլեմային տեխնոլոգիայով իրականացվող դասերի արդյունավետությունը շատ ավելի բարձր կլինի, եթե սովորողը կարողանա ինքնուրույն տիրապետել գիտելիքներին, և մանկավարժը լոկ դեկավարի այդ գործընթացը վերահսկմամբ [4, էջ 54]: Ներկայումս լայնորեն կիրառվող առցանց և խառը կամ հիբրիդային եղանակով ուսուցման դեպքում ևս պրոբլեմային ուսուցումը նյութի բազմաշերտ ընկալման հրաշալի հնարավորություններ է ընձեռում:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան հիմնվում է հետևյալ գաղափարի վրա. պրոբլեմային իրավիճակների կիրառումը սովորողին կանգեցնում է կանխատեսված դժվարությունների առաջ, որոնց հաղթահարումը պահանջում է ստեղծագործական որոնում և ստիպում է սովորողին մտածել, որոնել, քննարկել, ինչն էլ նպաստում է նրա իմացական հետաքրքրությունների զարգացմանը: Աշակերտը պետք է ինքնուրույն որոնի խնդրի լուծումը, իսկ ուսուցիչը պարտավոր է դեկավարել նրա ուսուցման գործընթացը՝ մոտիվացնելով, կազմակերպելով, համակարգելով, ուղղորդելով և վերահսկելով: Պրոբլեմային ուսուցումը հնարավորություն է ընձեռում, որ սովորողի մոտ ձևավորվեն ինքնակրթության հմտություն, նպատակադրման կարողություն, ձևավորվեն և զարգանան համագործակցային այնպիսի օգտակար հմտություններ, ինչպիսիք են՝ ինքնագնահատումը, ինքնավերահսկումը, փոխադարձ վերահսկումը: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ապահովում է նաև ուսուցման անհատականացում՝ ըստ ուսուցման բովանդակության, յուրացման արագության, ինքնուրույնության մակարդակի, վերահսկման եղանակների:

Այսպիսով, պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան բովանդակում է պրոբլեմային իրավիճակների ստեղծման տարբեր եղանակներ, մեթոդներ, որոնք՝ որպես ուսուցման արդյունավետ հնարներ, առավել մատչելի ու նպատակային են դարձնում առարկայական գիտելիքի յուրացումը:

Աշխարհագրության դասընթացում պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ենթադրում է նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների մշակում և ամրապնդում, սովորողների ստեղծագործական մտածողության ու անձնային այլ որակների զարգացում:

«Պրոբլեմային ուսուցման» մեթոդները ենթադրում են դասավանդողի կողմից պրոբլեմի առաջադրում, ձևակերպում, լուծում՝ ցույց տալով դրանց լուծման ուղիները: Այս տեխնոլոգիայի էությունն այն է, որ դասավանդողը ցուցադրում է գիտական ճանաչողության, խնդիրների լուծման օրինակներ, արդյունքում ամրապնդվում ու յուրացվում են պրոբլեմային ուսուցման մեթոդներով ձեռք բերված գիտելիքները:

Օգտագործված գրականություն

1. Սարգսյան Խաչիկ «Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա».2002
2. Խաչատրյան Սերոբ «Ուսուցման արդյունավետ հնարներ».2020
3. Զավարյան Է., Կենսաբանության դպրոցական դասընթացում պրոբլեմային ուսուցման կիրառման օրինակներ, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, Երևան, 2008, թիվ 3/4:
4. Матюшкин А. М., Проблемные ситуации в мышлении и обучении, Москва: «Педагогика», 1972
5. Осмоловская И.М., Организация общеобразовательной школе, М., Воронеж, 1998
6. <https://www.youtube.com/watch?v=ypgH51f2RDs>
7. <https://www.youtube.com/watch?v=FuE7yvemL24>